# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2(15/16)

## Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտիտական խորհրդի 28.10.15 թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 50 անդամներից 45 -ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ՝

1. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կանոնադրության ընդունումը
2. Հաղորդում մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների ղեկավարների նշանակման և 2-րդ կուրսեցիների թեմաների ու ղեկավարների ճշգրտման մասին: *Զեկ.՝ ամբ. վարիչներ*
3. Հաղորդում ֆակուլտետում կոնստրուկտորական բյուրոների կազմակերպման վերաբերյալ:

   *Զեկ.՝ Մ.Ալեքսանյան*
   *Տ.Աբրահամյան*
4. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների հաշվետվությունները 2014/2015 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու համար ատեստավորման հարցը:
5. Հաղորդում ԵՊՀ - ի 2016-2020թթ ռազվավարական ծրագրի իրականացմաբ ժամանակացույցային պլանը:
6. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..*

ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կանոնադրության ընդունումը:

<u>Լսեցին</u>- Ֆակուլտետի դեկան Յու. Լ. Վարդանյանը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետի կանոնադրության կետերը: Նշեց, որ կանոնադրությունը ֆակուլտետի խորհրդում ընդունվելուց հետո պետք է հաստատվի ԵՊՀ գիտական խորհրդում:

*Արտատայտվեցին.-* Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի վարիչ, Գ.Ալավերդյանը, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի պրոֆեսոր Խ. Ներկարարյանը, դոցենտ Ա. Մակարյանը: Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

Կեղի ունեցավ բաց քվեարկության: Քվերակության արդյունքներն են՝

*Կող.* *45*
*Դեմ* *0*
*Ձեռնպահ* *0*

*Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Ամբիոնների վարիչների հաղորդումները մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների ղեկավարների նշանակման և 2-րդ կուրսեցիների թեմաների ու ղեկավարների ճշգրտման վերաբերյալ:

***Որոշեցին.-*** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Օրակարգի 3 –րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ Մ.Ալեքսանյանի և ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ Տ.Աբրահամյանի հաղորդումներտ ֆակուլտետում կազմավորվող կոնստրուկտորական բյուրոների աշխատանքների վերաբերյալ:

**Արտատայտվեցին**.- Ֆակուլտետի դեկան Յու. Լ. Վարդանյանը, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և ՀՀ ամբիոնի պրոֆ Խ.Ներկարարյանը: Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

**Որոշեցին.-** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Շանթ Առաքելյանի** *(գիտ. ղեկ.՝ ֆ.մ.գ.դ., պրոֆ Խ.Ներկարարյան)* հաշվետվությունը ասպիրանտական երկրորդ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

***Արտահայտվեցին-*** Ասպիրանտի գիտական ղեկավար, ֆ.մ.գ.դ. Խ.ներկարարյանը հայտնեց, որ ասպիրանտի հաշվետվությունը լսվել է ամբիոնի նիստում, նա կատարել է երկրորդ տարում պլանավորած աշխատանքները: Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

***Որոշեցին-*** Ասպիրանտ **Շանթ Առաքելյանի** ասպիրանտական երկրորդ տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

***Լսեցին-*** Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռակա ասպիրանտ **Արփի Սարոյի Դիլանչյան Ղարղանի** *(գիտ. ղեկ.* ՝ Հ.Մ. Մարգարյան*)* հաշվետվությունը ասպիրանտական երրորդ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

***Արտահայտվեցին-*** Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆ, Ֆ.Գասպարյանը հայտնեց հայտնեց, որ ասպիրանտը կատարել է երրորդ տարում պլանավորած աշխատանքները: Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

***Որոշեցին-*** Ասպիրանտ **Արփի Սարոյի Դիլանչյան Ղարղանի** ասպիրանտական երրորդ տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

***Օրակարգի 5-րդ հարցի կապակցությամբ..***

***Լսեցին-*** Հաղորդում ԵՊՀ - ի 2016-2020թթ ռազվավարական ծրագրի իրականացմաբ ժամանակացույցային պլանը:

***Արտահայտվեցին-*** Ֆակուլտետի դեկան Յու. Լ. Վարդանյանը նշեց, որ ռազմավարական ծրագրի պլանը նախօրոք բաժանվել է ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին։ Առաջարկություններ են ստացվել ՝Ալիքային պրոցեսների տեսության՞ և ՝Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա՞ ամբիոնների կողմից։

**Որոշեցին.-** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Ընթացիկ հարցեր*

*Օրակարգի 6-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Կիսաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ և նույն ամբիոնին կից ՛՛Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի՛՛ գիտաշխատող Միքայել Սերյոժայի Ալեքսանյանի գիտական հրապարակումների մեծամասնության ոլորտը <<Նանոտեխնոլոգիա>> դասիչին համապատասխանության հարցը:

***Արտահայտվեցին.-*** Կիսաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Ֆ.Գասպարյանը նշեց, որ Միքայել Սերյոժայի Ալեքսանյանը ցանկանում է մասնակցել ՛՛Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող-2015՛՛ մրցույթին, որի համար պետք է ընտրել համապատասխան մասնագիտական դասիչ: Ցանկում առկա մասնագիտական դասիչներից Մ.Ս. Ալեքսանյանի գիտական հրապարակումների մեծամասնության ոլորտը համապատասխանում է <<Նանոտեխնոլոգիա>> դասիչնին:

***Որոշեցին-*** Կիսաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ և նույն ամբիոնին կից ՛՛Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի՛՛ գիտաշխատող Միքայել Սերյոժայի Ալեքսանյանի գիտական հրապարակումների մեծամասնության ոլորտը համապատասխանում է <<2.10 Նանոտեխնոլոգիա>> դասիչին:

***Օրակարգը սպառված է:***

***Խորհրդի նախագահ,***
***ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր*** ***Յու.Լ.Վարդանյան***

***Գիտքարտուղար*** ***Վ.Ռ. Թադևոսյան***